մանկագունից, զԳրիգոր և զԿիրակոս, այնչափ հարին չարչար, մինչեւ անկան մարմնքն 'ի մարմնոց նոցին, և այնպէս կատարեցան 'ի Քրիստոս։ Զմխիթար բէյիրն եւ զմի միայնակեաց յաղդէ մերմէ, տարան յԵգիպտոս և անդ ընպանին զնոսա։ Կալան և զՏէր Մկրտիչ Արք եպիսկոպոսն Երուսաղէմի և բազում խոստմամբ ոչ կարացին խախտել զնա 'ի հաւատոցն. ապա կապանօք և աղդի աղդի տանջանօք չարչարեցին, և նա համբերեաց վասն սիրոյն Քրիստոսի, եւ յաղթեաց յամենայնի Տերամբ, որ տայ համբերութիւն սիրողաց իւրոց։ Յայս ներդութիւնս Աւետարանն իմ 'ի Գողգոթայ մնայց եւ ոչ կարացի հանել զնա, յորոյ վերայ վշտացաւ սիրտ իմ, և հատաւ յոյս ակնկալութեան իմոյ միւսանդամ տեսանել բացեալ զդուռն տաճարին Ս. Յարութեան, և զԱւետարանն։ Ապա ածի զմտաւ թէ գողացան զայն, եւ ես մնացի անյիշատակ, ուրեմն ձեռն արկից գրել զտարեգիրքն (Ճաշոց)։ և տացէ ինձ Քրիստոս կեանս տեսանել զխաղաղութիւն աշխարհի եւ զաւետարանն, ծախեցից զայն 'ի մարմնաւոր պէտս իմ։ Ողորմածն Աստուած, որ կատարէ զամենայն բարի խնդրուածս՝ զկնի շորից ամսոց եւ տեսանել մեզ այնպիսի ուրախութեամբ, զոր այլ ոք չէր տեսեալ, եւ գտի զաւետարանս, զխաչն զկոճակն և զկոստեղն քակեալ էին, և ուրախ եղէ 'ի փառս Քրիստոսի։ Եւ վասն առաջի ուխտիս որ գրեցի զսա Ս. Գողգոթայիս ոչ կարացի ուխտաղանց լինել, այլ եռու զսա ըստ այնմ, զքոյս 'ի քոյոց քեզ ընծայեմք յամենայնի կարող Տէր, 'ի Թուին Հայոց 814 (1365) 'ի 12 Յուլիսի։ գրեալ 'ի Վարդան վարդապետէ Բարերդցւոյ 'ի գեղջէ Երմնու։ Սոյն այս Վարդան վարդապետ կացեալ յԵրուսաղէմ ամս 12։ գրէ 2 Ճաշոց գիրքս։ մին Գողգոթայի և միւսն Ս. Փրկչի։ եւ 1 աւետարան Ս. Ծննդեան։ երթայ 'ի Սիս եւ մնայ անդ ամիսս 9։ ձեռնադրի եպիսկոպոս 'ի Տէր Կոստանդին Կաթուղիկոսէ։ Աւետիս արեղայ եղբայր սորին գայ յԵրուսաղէմ, և չգտեալ զնա անդ՝ երթայ 'ի Սիս եւ առեալ զեղբայրն իւր տանի 'ի Դրիմ, ուր զկնի 6 ամսոյ վախճանի Աւետիս՝ և ինքն Վարդան եպիսկոպոս գրէ միւս եւս Ճաշոց անդ 'ի Դրիմ վասն Ծննդեան վանաց և առաքէ յԵրուսաղէմ (1377)։